ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ք. Երևան **___.___.20__ թ.**

«Էներգո Թրեյդ Սերվիս» ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ _____ի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ ***«Մատակարար»***), մի կողմից,

և

«_____» _____, ի դեմս ընկերության տնօրեն՝ _____ի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ ***«Սպառող»***), մյուս կողմից,

համատեղ կոչվելով ***«Կողմեր»***, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ ***«Կողմ»***, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ ***«Պայմանագիր»***) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. Մատակարարը պարտավոր է՝

1) Սպառողի հասցեում/հասցեներում Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա:

2) Մատակարարը Սպառողի կամ դիմող անձի գրավոր դիմումին տալիս է գրավոր պատասխան, բանավոր դիմումին՝ բանավոր պատասխան, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին պատասխանը տրվում է էլեկտրոնային փոստի միջոցով՝ դիմումն ստանալուց հետո (բացառությամբ՝ բանավորի) 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:

4. Մատակարարն իրավունք ունի՝

Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում:

5. Սպառողը պարտավոր է՝

Վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքը՝ համապատասխան հարկային հաշիվը դուրս գրելուց 5 (հինգ) օրացույցային օրվա ընթացքում:

6. Սպառողն իրավունք ունի՝

Պահանջել Մատակարարից կատարել օրենքով և Պայմանագրով սահմանված պարտականությունները:

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սպառված էլեկտրական էներգիայի քանակը, որոշվում է Հավելված 1 - ում նշված առևտրային հաշվառքի սարքերով (առևտրային հաշվիչներով և չափիչ տրանսֆորմատորներով), որը հաշվարկվում է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ կողմից շահագործվող և սպասարկվող շուկայի կառավարման ծրագրում:

8. Էլեկտրական էներգիայի արժեքը կազմում է՝ _____ դրամ/կՎտժ (ներառյալ ԱԱՀ-ն):

9. ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի (այսուհետ՝ ***«Հանձնաժողով»***) կողմից սահմանված սակագների փոփոխման դեպքում 8-րդ կետով նախատեսված Պայմանագրի գինը ենթակա է համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ փոփոխման, ինչի կապակցությամբ Կողմերը պարտավորվում են կնքել լրացուցիչ համաձայնագիր Պայմանագրի 8-րդ կետով սահմանված գնի փոփոխման վերաբերյալ: Փոփոխության հետ Սպառողի անհամաձայնության պատճառով Պայմանագրի լուծման դեպքում, Պայմանագիրը համարվում է լուծված Սպառողի նախաձեռնությամբ:

10. Պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում Սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար ՀՀ օրենսդրական ակտերով սահմանված ժամկետի վաղեմության, որից հետո միայն հաշվարկված տույժի մարմանը:

11. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները, որպես կանխավճար, ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը:

4. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

12. Մատակարարն իրավունք ունի դիմել Երաշխավորված մատակարարի (այսուհետ՝ ***«Բաշխողին»***) Սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելու նպատակով կառավարությունը սպառված էլեկտրական էներգիայի դիմաց Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

13. Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, Պայմանագրով սահմանված կարգով:

14. Սպառողի կողմից պայմանագրի 5-րդ կետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր ուշացած օրվա համար չվճարված գումարի 0.04 տոկոսի չափով:

15. Սպառողը ընդունում է և գիտակցում է որ՝

1) Բոլոր տեխնիկական հարցերը, այդ թվում՝ մատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների, վթարների, առևտրային հաշվառքի սարքերի ապահավաքակցման կամ փոխարինման հետ կապված և այլ հարաբերությունները կարգավորվում են էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրով:

2) էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի համաձայն, Բաշխողը պարտավորվում է մատուցել Մատակարարից գնված էլեկտրական էներգիայի բաշխման բաշխման ծառայություն, իսկ Սպարողը պարտավորվում է վճարել մատուցված ծառայության դիմաց: Բաշխման ծառայության արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանած սակագնի և մատուցված ծառայությունների քանակի արտադրյալով:

3) Երաշխավորված մատակարարի կողմից էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային (այսուհետ ***«ԷՄԱ»***) կանոններով սահմանված դեպքերում Սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու դեպքում Հաշվարկային ամսվա ընթացքում Երաշխավորված մատակարարի կողմից Սպառողին մատակարարված էլեկտրական էներգիայի արժեքը հաշվարկվում է այդ սպառողական խմբի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնի և մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի արտադրյալով:

6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

16. Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Պայմանագրի իմաստով ֆորս-մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են Կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:

17. Պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

18. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

19. Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու

դեպքում բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվում է «Օպտիմուս Լեքս» Ընկերության մշտապես գործող Արբիտրաժային դատարանին, այսուհետ նաև՝ Արբիտրաժային դատարան: Արբիտրաժային դատարանում գործի քննությունը իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին և Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Սույնով կողմերը հավաստիացնում են, որ տեղեկացված են Արբիտրաժային դատարանում գործերի քննության ընթացակարգին: Արբիտրաժային դատարանի կանոնակարգը տեղակայված է Ընկերության պաշտոնական ինտերնետային www.optimuslex.am կայքում: Կողմերը սահմանում են, որ Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Վեճերի քննությունն իրականացվում է գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման, բացառությամբ «Արբիտրաժային դատարանի կանոնակարգով» նախատեսված դեպքերի՝ ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, Արբիտրաժի վայրը՝ ՀՀ, ք. Երևանը:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

20. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ կողմից շահագործվող և սպասարկվող շուկայի կառավարման ծրագրում Սպառողի առևտրային հաշվարքի սարքը(երը) Մատակարարի հաշվեկշռման խումբ ընդգրկման օրվանից և գործում է անժամետ:

21. Պայմանագիրը կարող է լուծվել՝

1) Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին առնվազն 6 (վեց) աշխատանքային օր առաջ տեղեկացնելու Մատակարարին պայմանով:

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և Պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Սպառողին 15 (տասնհինգ) օր առաջ տեղեկացնելու պայմանով:

4) Բաշխողի հետ պայմանագրի լուծման դեպքում:

22. Պայմանագրի լուծումը չի ենթադրում Կողմերի դրամական պարտավորությունների մարում:

23. Մատակարարման Պայմանագրի լուծումը չի ազատում Կողմերին այդ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից:

24. Պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր, պայմանով, որ չեն հակասում Պայմանագրին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:

25. Պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ Պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

26. Պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր Կողմի համար:

27. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ԷՄԱ կանոններով, ինչպես նաև այլ ՀՀ օրենսդրական ակտերով:

9. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

28. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Պայմանագրի շրջանակներում ծանուցումները համարվում են պատշաճ կատարված, եթե դրանք ուղարկված են Կողմին պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ կամ էլեկտրոնային փոստով՝ ներքոգրյալ էլեկտրոնային հասցեներին, մասնավորապես՝

Մատակարար՝ info@energytradearmenia.com,

Սպառող՝ _____:

29. Այն դեպքում, երբ Կողմը պատշաճ կարգով չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի/էլեկտրոնային հասցեի փոփոխության մասին, ապա պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

30. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածն՝

Սպառողի առևտրային հաշվառքի սարքի տվյալների մասին N 1 հավելվածը:

11. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար	**Սպառող**
«Էներգո Թրեյդ Սերվիս» ՍՊԸ	**«_____» _____**
Հասցե ք. Երևան, 0029, Սիլիկյան թղմ. 4 փ., տ 9	**Հասցե** _____
ՀՎՀՀ 01317192	**ՀՎՀՀ** _____
Հեռ. + 374 93 900 211	**Հեռ.** _____
Էլ. Փոստ info@energytradearmenia.com	**Էլ. Փոստ** _____
Բանկ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ	**Բանկ** _____
Հ/հ 11817116185400	**Հ/հ** _____
Գործունեության լիցենզիա N 0691	
Տնօրեն _____	**Տնօրեն** _____
_____ (ստորագրություն, Կ. Տ.)	_____ (ստորագրություն, Կ. Տ.)

Հավելված 1
Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի

Տեղակայման վայրը	Հաշվիչ				Չափիչ տրանսֆորմատոր						ԷՄՇ առևտրի մասնակցի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվիչների և չափիչ տրանսֆորմատորների ամբողջականության պահպանման պատասխանատու կողմը
					Հոսանքի			Լարման			
	տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը	թույլատրելի հոսանքը (Ա)	անվանական լարումը (Վ)	հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը	ճշտության դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը	ճշտության դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12

Մատակարար

Տնօրեն _____

_____
(ստորագրություն, Կ. Տ.)

Սպառող

Տնօրեն _____

_____
(ստորագրություն, Կ. Տ.)